## ԵՂՋԵՐՎԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՀԵՏՔԵՐԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ս. Հ. ԴԵՎԵՋՅԱՆ

1975 թ. ամռանը Լոռի բերդի նախնադարյան դամբարանադաշտում բացվեց մ. թ. ա. XIV—XIII դդ. թվագրվող, հիմնահողային հարուստ մի դամբարան (№ 15), որի երկարությունն էր 5,6 մ, լայնությունը՝ 1,8 մ, խորությունը՝ 2 մ, արտաքին դամբանաթումբ չուներ, ծածկված էր 4 հսկայական սալաքարերով։ Դամբարանն աչքի ընկավ սև փայլեցրած, զարդարուն խեցեղենով, բրոնզե բազմազան իրերով (սակր, դանակ-քերիչ, կեռ, շքասեղ, կաթսաներ և այլն), ոսկե ու արծաթե նրբագույն ուլունքների ու զարդերի առատությամբ։ Սակայն ամենանշանակալիցը եղջերուների բրոնզե արձանախումբն էր, կոմպոզիցիոն մի քանդակ, որի կենտրոնում վեհորեն կանգնած է արու եղջերուն, փարթամ եղջյուրներով, նրա երկու կողմերում՝ էգերը, ոլոնց տակ նստած ձագուկները կաթ են ծծում։ Արու եղջերվի ետևում կանգնած են երկու կատվաշներ (հեպարդներ)՝ երկար գնչերով ու պոչերով։ Եղջերուները պատկերված են ռեալիստորեն, շեշտված են կենդանիների հզոր վզերը, կարճ պոչերը, մարմիններն իրենց մանրամասներով ու համաչափությամբ։ Իրանամասերը սնամեջ են, ունեն երկարավուն և եռանկյունաձև ծակոտիներ, որոնց միջով երևում են ներսի գնդիկ-կոշնակները։ Եղջերուներն ունեն երկար ու նեղ գնչեր, որոնց տակից կլոր օղակներ են կցված։ Այս խումբը կանգնած է հարթ պատվանդանի վրա, որը ծնկանման մասի միջոցով ամրացված է խարսխաձև ավարտվող հաստ, զարդարուն ձողի ծայրին։ Արձանախումբը, պատվանդանով հանդերձ, կարող է պտտվել իր առանցքի շուրջը։ Ձողը ներքևի մասում ելուստ ունի· փայտի մեջ ամրանալու համար։ Քանդակը, խարսխաձև ձողի հետ միասին, 33 սմ բարձրություն ունի (նկ. 1—3)։ Արձանիկները պատրաստվել են կենդանիների տարբեր մասերը մոմե կաղապարների մեջ առանձին ձուլելու և ապա խնամքով իրար զոդելու և վրայից հղկելու միջոցով։ Խարսխաձև ձողը նույնպես ձուլվել է առանձին, ապա միացվել քանդակները կրող հարթությանը՝ լրացուցիչ զոդված ծնկանման մասի միջոցով։

Իր ոճական առանձնահատկություններով քանդակը լիովին համապատասխանում է Հայաստանի ուշ բրոնզեդարյան արվեստի վաղ փուլին և անկասկած տեղական վարպետ-արվեստագետի ձեռքով է պատրաստված։ Եղջերուներն իրենց ծավալաձևերով խիստ արտահայտիչ են, արվեստագետը համարյա հասել է նմանակման։ Արձանախումբն անկասկած պաշտամունքային բնույթ ունի և օգտագործվել է ծիսական արարողությունների ժամանակ։ Բարձր փայտե ձողի վրա ամրացված, այն պտտվել է իր առանցքի շուրջը և զանգակների ձայն արձակել։

Եղջերուները Հայաստանի նախնադարյան մշակույթի հուշարձաններում երևում են սկսած մ. թ. ա. III հազարամյակից։ Փորագրման եղանակով կերտված եղջերուների գեղեցիկ շարք է պատկերված Շենգավիթի սև փայլեցրած թասի կողերին[1], իսկ Պուլուրի (արևմտյան Հայաստան) պաշտամունքային հենակի վրա տեսնում ենք ռելիեֆ-ներձկման եղանակով կերտված եղջերվի հոյակապ, սխեմատիկ պատկերը՝ ցատկի վիճակում[2]։ Շների կող-

---

[1] Ս. Հ. Սարգսյան. Նախնադարյան հասարակությունը Հայաստանում. Երևան, 1967, էջ 186, աղ. IX, 1։

[2] H. Z. Koşay. Pulur (Sakyol) excavations, 1970, Keban project 1970 activities. Ankara, 1972, p. 113, tab. 96.

մից հնամանվող, վաղող այծերի ու եղջերուների մի կոմպոզիցիա է ներխայացված Մարտունու շրջանի Նեռքէն Գետաշեն գյուղի գունաղարդ անոթի վրա (մ. թ. ա. XVII—XVI դդ.)[3]։ Նույն ժամանակաշրջանի Թռեղքի արծաթե գավաթի ու դույլի վրա նույնպես արու և էգ եղջերուներ են դրվագված[4]։ Սա-



Նկ. 1 Նկ. 2

կայն եղջերուների ծավալային քանդակները հանդես են գալիս ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանում, սկսած մ. թ. ա. XIV դարից։ Եղջերուների բրոնզե քանդակներ Հայաստանում հայտնի էին Զանգեզուրի (Տոլորս, մ. թ. ա. X դար) և Լճաշենի (մ. թ. ա. XIV—XIII դդ.) պեղումներից[5], փոքրիկ արձա-

---

3 Ա. Ա. Քալանթարյան, Ժ. Դ. Խաչատրյան. Հնագիտական հազվագյուտ հայտնագործություն Սևանի ավազանից. ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1969, № 4, էջ 75—77։

4 Б. А. Куфтин. Археологические раскопки в Триалети. Тбилиси, 1941, с. 87, рис. 93, табл. LXXXVIII и XCI.

5 А. О. Мнацаканян, Находки предметов бронзового века в селении Толорс (в Зангезуре) АрмССР.—КСИИМК, вып. 54, 1954, рис. 2. Его же. Древние повозки

նիկ-ծայրապանակներ են հայտնաբերվել նաև Սիսիանի շրջանում (Վաղուդի և Անգեղակոթ, մ. թ. ա. IX—VIII դդ.)[6]։

Վերջերս, պատահաբար, եղջերվի ոտ մեծ բրոնզե քանդակ է հայտնաբերվել Հոկտեմբերյանի շրջանի Բամբակաշատ գյուղում (նկ. 4)։ Այն 8 սմ

Նկ. 3

բարձրություն և 8,3 սմ երկարություն ունի, աչքի է ընկնում մարմնի անհամաչափությամբ։ Իրանը փոքր է ու անարտահայտիչ, դրա փոխարեն ուշադրություն է դարձված կենդանու գլխի, մանավանդ փարթամ, աղեղնաձև ու ճյուղավոր եղջյուրների վրա, որոնք ծայրերում հարթվելով, եռատամ ճյուղիկներով հակվում են իրար։ Գլխի վրա թույլ թմբիկների միջոցով արտահայտված են աչքերը, բերանը փորագրված է, ականջները ցած են կախված։ Արձանիկը միաձույլ է, բացի եղջյուրներից, որոնք գլխի վրա լոդված են առանձին։ Սա, ամենայն հավանականությամբ, դամբարանից է հայտնաբեր-

---

из курганов бронзового века на побережье оз. Севан.—СА, 1960, № 2, с. 150, рис. 17; С. А. Есаян, А. О. Мнацаканян. О статуэтках из Лчашена.—«Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 2, էջ 254—255, աղ. 1, 2։

6 ՀՊՊԹ, դույլ № 2308։ Օ. Խնկիկյան. Պեղումներ Անգեղակոթում. ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1978, № 3, էջ 100, աղ. 1—13։

վել։ Ուղեկցող նյութերի բացակայությունը թեև դժվարացնում է նրա թվագրման հարցը, սակայն նկատի ունենալով արձանիկի ոճական առանձնահատկություններն ու պատրաստման տեխնիկան, կարելի է այն համարել մ. թ. ա. II հազարամյակի վերջի կամ մ. թ. ա. I հազարամյակի սկզբի արտադրանք։ Մարմնի ձևով նմանություններ ունի Լծենի, Լալայանի կողմից հանդեղուրում հայտնաբերվածների և իր ժամանակաշրջանի այլ արձանիկներին[7]։

Նկ. 4

Այսպիսով, Լոռի բերդի եղջերուների նման արձանախումբ չի հանդիպել ո՛չ Հայաստանում, ո՛չ Կովկասում և ո՛չ էլ Միջագետքում։ Որոշ նմանություն ունեցող քանդակներ հայտնի են փոքրասիական Ալաջահույուք հնավայրի դամբարաններից, որոնք թվագրվում են մ. թ. ա. XXV—XVIII դդ. և ուսումնասիրողների կարծիքով նախախեթական և խեթական պաշտամունքի ու արվեստի գործեր են։ Դրանք արու եղջերուների ու ցուլերի քանդակներ են, որոնց մի մասի վրա կան լուսատուների պատկերներ։ Հանդիպում են նաև արևը խորհրդանշող սվաստիկաներից, խաչաձև պատկերներից ու թռչուններից բաղկացած սկավառակաձև առարկաներ[8]։

Ըստ Պիգոտի վերականգնման, հիշյալ արձանիկները կանգնեցված են եղել ձողերի վրա, թագավորական դամբարանի մահիճ-պատգարակի շորս անկյուններում, իսկ արևը խորհրդանշող սկավառակները զարդարել են փայտե ամպհովանու վերին եզրերը[9]։

Ալաջահույուքի արձանները ևս, ինչպես Հայաստանից հայտնաբերվածները, գտնվել են «ղենքերով, զարդերով և ոսկե ամաններով հարուստ դամբարաններում։ ...Թվում է, որ դրանք ամրացված են եղել ձողի ծայրին և դրա համար էլ կոչվում են շտանդարտներ»[10]։ Նման դրոշները (շտանդարտ-

---

[7] А. А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, рис. 62. Ե. Լալայան. Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում. Երևան, 1931, նկ. 165—166։

[8] Իրոք, սվաստիկաներ կրող առարկաներ և խաչաձև պատկերներ հայտնի են նաև Լճաշենի ու Լոռի բերդի պեղումներից (մ. թ. ա. XIV—XIII դդ.)։ Ավելորդ չենք համարում ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ Ալաջահույուքի կենդանաքանդակ և երկրաչափական ձևեր կրող սկավառակաձև «դրոշները» «նստած» են զույգ «եղջյուրների» վրա։ Թեև Հայաստանի քանդակները վերոհիշյալներից զգալիորեն ուշ են թվագրվում, այնուամենայնիվ կարելի է նմանություն գտնել այդ «եղջյուրների» և մեր արձանների բաղկացուցիչ մասը կազմող խարսխաձև պատվանդանների միջև։ Նմանությունն, ըստ երևույթին, ոչ միայն ձևի մեջ է, այլև բովանդակության։ Թվում է, որ մեր «խարիսխները» եղջյուրների խիստ ոճավորված ձևերն են և իրենց իմաստով նրանց համարժեքը։ Մի այլ առիթով անդրադարձել ենք այս խարսխաձև առարկաներին և համարել հավանաբար իշխանության նշան, սակայն, եթե դրանք իսկապես եղջյուրի արտահայտություն են, ուրեմն խորհրդանշում են առատությունն ու պտղաբերությունը՝ մի անգամ ևս հաստատելով իրենց վրա կրող կենդանիների էությունը։

[9] S. Pigott. The Dawn of civilization. London, 1961, pp. 164—165.

[10] H. Frankfort. The art and architecture of the ancient Orient. London, 1954, p. 113.

ները) ընդհանրապես տարածված էին առաջավորասիական քաղաքակրթության մեջ։ Ուշագրավ է Մարի քաղաքի Իշտարի տաճարից հայտնաբերված սադափե թերթիկներից պատրաստված որմնապատները։ Դա մի գրվագ է Մարիի և Շումերի միջև տեղի ունեցած պատերազմի վերջին իրադարձություններից, հաղթական ու հանդիսավոր մի երթ, որտեղ շումերցի գերիների առջևից ընթացող դրոշակակիր քուրմը երկու ձեռքով բռնել է երկար, ուղղահայաց մի ձող, որի ծայրին կանգնեցված է ցուլի բրոնզե քանդակ (նկ. 5)[11]։ Ելնելով «դրոշի» համամասնություններից, Շեֆֆերը գտնում է, որ ցուլը, նվազագույնը 30 սմ երկարություն պետք է ունենար և կանգնեցված լիներ շուրջ 1,5 մ բարձրության ձողի վրա։ Ուստի, այն բավական ծանր պիտի լիներ և մանավանդ քայլելու ընթացքում ուղղահայաց պահելը՝ շատ դժվար։ Այդ պատճառով էլ ձողի ներքևի մասը զարդարուն չպետք է լիներ (ինչպես դա երևում է որմնապատկերում), այլ ողորկ, որպեսզի դրոշակակրի ձեռքը չհոգներ կամ չվիրավորվեր։ Նա բերում է հին աղբյուրներում պահպանված տեղեկություններն այս «դրոշների» ծանրության և գործածության դժվարությունների մասին։

Նկ. 5

Խոսքը Աստվածաշնչում նկարագրված իսրայելացիների և ամաղեկցիների կռվի մասին է Սինայի ճանապարհին։ Իսրայելացիների առաջնորդ Մովսեսը քաջալերում է իր ժողովրդին, ասելով. «Վաղը ես կանգնած կլինեմ բլրի գագաթին՝ Եհովայի գավազանը ձեռքիս»։ Այս կռվի ընթացքում, քանի Մովսեսը կարողանում էր բարձր պահել գավազանը, հաղթում էին իսրայելացիները։ Երբ նրա ձեռքերը հոգնում էին և իջեցնում էր գավազանը, իսրայելացիները պարտվում էին։ Այս տեսնելով նրա մերձավորները շտապում են օգնության և մինչև արևի մայր մտնելը կարողանում են գավազանը բարձր պահել։ Այսպիսով Իսրայելի ժողովուրդը հաղթանակ է տանում[12]։

Շեֆֆերն այս դրոշները քաղաքների (Ուգարիթ, Մարի) խորհրդանշան, ինչպես նաև աստվածության սիմվոլիկ պատկեր է համարում և դիպուկ կերպով մատնանշում է դարձյալ իսրայելացիների ոսկե հորթի պատմությունը։ Կենդանակերպ հին կուռքերի մասին բազմաթիվ այլ հիշատակություններ կարելի է գտնել Աստվածաշնչում[13]։

Մարիի և Ուգարիթի ցուլերի կողքին հիշատակության արժանի են Լճաշենի ձուլածո բրոնզե ցուլերը[14], չափազանց դինամիկ ու ազդեցիկ քանդակներ, որոնք անկասկած պաշտամունքի առարկաներ են եղել և որոնց շուրջը նույնպես ծիսական արարողություններ են կատարվել։ Որոշ ուսումնասիրողներ (Ալաջահույուքի եղջերուների քանդակների կապակցությամբ) գտնում են, որ եղջերուն շատ հազվադեպ է սրբազան կենդանի համարվել Մերձավոր

---

[11] A. Parrot. Mari capitale fabuleuse. Payot, Paris, 1974, p. 46, pl. XIII Н. Д. Флиттнер. Культура и искусство Двуречья. М.— Л., 1958, с. 117—120, рис. на с. 119.

[12] Աստվածաշունչ. Վիեննա, 1930, Գիրք Ելից, էջ 68։

[13] C. F. A. Schaeffer. Nouveaux temoignages du culte de El et de Baal a Ras Shamra—Ugarit et ailleurs en Syrie—Palestine. T. XLIII, Syrie. Paris, 1966, p. 11—14. Աստվածաշունչ, էջ 70—71, 75, 84—85, 113։

[14] А. О. Мнацаканян. Древние повозки..., с. 149, рис. 15—16.

Արևելքում, որ այն պաշտվել է եվրասիական դաշտերում ու տափաստաններում և Փոքր Ասիայում՝ խեթերի կողմից, որոնք այս հարցում իրենց հարևաններից տարբերվում էին[15]։

Իսկապես, եղջերվի թեման լայն տարածում չունի առաջավորասիական արվեստում, սակայն Ֆրանկֆորտի այն կարծիքը, թե եղջերվի պաշտամունքի հարցում խեթերն իրենց հարևաններից տարբերվում էին, հերքվում է

Նկ. 6

վերջին երկու-երեք տասնամյակում Արևելյան Հայաստանում ու Կրաստանում հայտնաբերված եղջերվի արձանիկներով, բազմաթիվ ժայռապատկերներով ու ոսկրային մնացորդներով։ Լոռի բերդի, Լճաշենի, Տոլորսի և այլ բրոնզե արձանիկներն ու անդրկովկասյան գոտիների պատկերները (մ. թ. ա. II հազ. II կես), եղջերվի պաշտամունքի ապացույցներ են, իսկ Սյունյաց ու Գեղամա լեռների ժայռապատկերները բացահայտում են եղջերվի կարևոր դերը Հայկական լեռնաշխարհի բնիկների կյանքում մ. թ. ա. III հազարամյակից և ավելի վաղ ժամանակներից սկսած (նկ. 6)։ Եղջերուներն այստեղ պատկերված են որսի տեսարաններում՝ որսորդների, շների, երբեմն կատվաշների կողմից հալածվելու միջոցին[16]։ Ժայռապատկերներում արտացոլված է նաև եղջերուներին պարանի կամ մահակի օգնությամբ կենդանի բռնելը[17]։ Որոշ կոմպոզիցիաներում երևում են եղջերուներ՝ եզներով լծված սայլերի և ընտանի կենդանիների խաղաղ միջավայրում[18]։ Կան նաև վայրի այծերով, գիշատիչներով ու այլ կենդանիներով շրջապատվածները, որոնք եղջերվին

---

15 H. Frankfort, նշվ. աշխ., էջ 116—117։

16 Գ. Հ. Կարախանյան, Պ. Գ. Սաֆյան. Սյունիքի ժայռապատկերները. Երևան, 1970, նկ. 2, 23-2, 31-1, 79-1, 117-1, 150, 159-2, 266-1, 292։ Հ. Ա. Մարտիրոսյան, Հ. Ռ. Խորայելյան. Գեղամա լեռների ժայռապատկերները. Երևան, 1971, նկ. 114, 168, 175, 178, 180, 258։ Հ. Ա. Մարտիրոսյան. Գեղամա լեռների ժայռապատկերները. պրակ III, Երևան, 1981, նկ. 40-2, 49-1, 51-54, 57։

17 Գ. Հ. Կարախանյան, Պ. Գ. Սաֆյան. նշվ. աշխ., նկ. 106-2, 139, 236, 278-1, 279-2։ Հ. Ա. Մարտիրոսյան. նշվ. աշխ., նկ. 54—56։

18 Գ. Հ. Կարախանյան, Պ. Գ. Սաֆյան. նշվ. աշխ., նկ. 144-2, 162, 190։

ներկայացնում են ազատ բնության մեջ[19], և բոլորովին առանձին պատկերվածները[20]։ Վերջինները, բրոնզե քանդակների նման, պաշտելի կենդանու կերպարանք ունեն։ Հետաքրքիր են հատկապես ոլոսի և կենդանուն ողջ բրոնելու հետ առնչվող մոգական պարի տեսարանները[21], որոնք նախնադարի որսորդին հեռացնելով զուտ կենցաղային բնույթի հոգսերից, տանում են դեպի պաշտամունքի ոլորտները։

Ուսումնասիրելով Հայաստանում առայժմ հայտնի բոլոր ժայռապատկերներն ու ոսկրաբանական նյութերը, հնէակենդանաբան Ս. Կ. Մեժլումյանը ենթադրում է, որ մ. թ. ա. II հազարամյակում, գուցե նաև ավելի վաղ, եղջերուները կարող էին ընտելացվել[22]։ Մեծ քանակությամբ եղջերվի ոսկորներ են գտնվել Լճաշենի կիկլոպյան ամրոցի II հազարամյակի շերտերում. որոնք գործիքներ պատրաստելու համար կտրտված են եղել տարբեր ձևերով ու չափերով։ Եղջերվի եղջյուրների հիմքի գլանաձև ծակված կտորներ են հայտնաբերվել արևելյան Վրաստանի ու կենտրոնական Կովկասի ուշ բրոնզեդարյան դամբարաններում (Սամթավրո, Բեշտաշեն, Տլի և այլն), որոնց նշանակությունը դեռ վերջնականապես պարզված չէ։ Նման եղջյուրներ հայտնաբերվեցին նաև մեր կողմից Ստեփանավանի վաղ երկաթեդարյան դամբարանների 1980 թ. պեղումներից։ Շիրակավանում հայտնաբերվել են էգ եղջերվի և նրա զույգ նորածին ձագերի ոսկորները, բնակավայրի մ. թ. ա. III հազարամյակի վերջով թվագրվող շերտից և այլն։ Ինչ վերաբերում է արագավազ, սուր լսողություն ու տեսողություն ունեցող կատվաշներին, ապա Ս. Մեժլումյանի կարծիքով սրանք նույնպես ընտելացվել են ու ծառայել մարդուն որսի ժամանակ[23]։ Կատվաշների օգնությամբ որս անելը տարածված է եղել նաև միջնադարում։ Որսի վրա հարձակվող կատվաշների պատկերները բազմաթիվ են միջնադարյան մանրանկարչության մեջ, իսկ Մխիթար Գոշի առակներից մեկում խոսվում է որսի դուրս ելած կատվաշան մասին, որն իր ծուլության պատճառով չի հասնում որսին և դրա համար հանդիմանում է տիրոջը[24]։

Ուսումնասիրելով եղջերվի պաշտամունքն Անատոլիայում, Ս. Պժևորսկին հետխեթական շրջանի խեցեղենից օրինակներ է բերում, որոնց վրա պատկերված են զոհաբերության համար ցանկապատերի մեջ պահվող եղջերուներ։ Նա գտնում է, որ մոտավորապես նման ցանկապատեր գոյություն ունեին դեռևս խեթական շրջանում, քանի որ Բողազքյոյի սեպագիր արձանագրությունները վկայում են, որ խեթական տաճարներին հաճախ եղջերուներ լծած կառքեր էին նվիրաբերում։ Եղջերուն աստվածության կցորդ կենդանի է եղել, որի վրա կանգնեցվել են արական աստվածներ։

Մ. թ. ա. II հազարամյակի II կեսի խեթական քանդակարվեստում եղջերվի վրա կանգնած աստվածության բազմաթիվ օրինակներ կան (ինչպես այլ դեպքերում՝ ցուլի, առյուծի և հովազի)։ Պժևորսկին գտնում է, որ եղջերուն և ցուլը մ. թ. ա. XIII դարի կնիքներում հանդես են գալիս նույն ոճով և նույն վիճակում, ուստի, նրանք հավասարազոր բնույթ և համանման նշանակություն ունեն։ Եղջերվի ու սրբազան ցուլի դերը պաշտամունքի մեջ համարյա հավասար է և հավասարապես կարևոր, որը երևում է դեռևս նախախեթական ժամանակաշրջանից (նկատի ունի Ալաջահյուքի իշխանական դամբարանների բրոնզե արձանները, մ. թ. ա. 2450—1980 թթ.)։ Անա-

---

19 Նույն տեղում, նկ. 1, 3, 16, 22-2, 68-2, 83-2, 89-1, 3, 137-1, 201. 217, 239, 252, 277-1, 33, 56, 66, 188, 324։

20 Նույն տեղում, նկ. 19-1, 28-2, 78-1, 79-2, 110-4։ Հ. Ա. Մարտիրոսյան, Հ. Ռ. Իսրայելյան. նշվ. աշխ., նկ. 28—32, 56։

21 Հ. Ա. Մարտիրոսյան. Գիտությունն սկսվում է նախնադարում. Երևան, 1978, էջ 10, նկ. 10, էջ 16։ Գ. Կարախանյան, Պ. Սաֆյան, նշվ. աշխ., նկ. 148-2։

22 Հ. Ա. Մարտիրոսյան. Դեղամա լեռների ժայռապատկերները. պրակ III, էջ 41։

23 Նույն տեղում, էջ 41—44։

24 И. А. Орбели. Басни средневековой Армении. М.—Л., 1956, с. 57.

տոլիայում եղջերվի ամենավաղ ոսկրային մնացորդները հայտնաբերվել են Այիշարհույուք 1a-ից։ Պժևորսկին եզրակացնում է, որ Անատոլիայում (արևվկյան և կենտրոնական) եղջերվի պաշտամունքը հարատևել է ցուլի պաշտամունքի կողքին մ. թ. ա. III հազարամյակի կեսից մինչև մ. թ. III դարը և չնայած իր գոյության երեք հազարամյակների ընթացքում կրած որոշ փոփոխություններին, եղջերուն մնացել է սրբազան կենդանի երկրի տեղական բնակչության համար։ Ֆրանկֆորտի նման նա ևս գտնում է, որ եղջերվի աստվածության կոնցեպցիան լուտ անատոլիական է, բոլորովին այլ Հին Արևելքի ժողովուրդների կրոնական ու պաշտամունքային հավատալիքներից, այն սահմանված է միայն խեթական աշխարհի համար[25]։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհի բնիկները դեռևս իրենց պետական ու վարչական միավորումները չունեին և Հին Արևելքի պատմության թատերաբեմում որպես այդպիսին չէին երևացել, սակայն տնտեսական, սոցիալական ու հոգևոր զարգացման մակարդակով արդեն կանգնած էին պետականության ստեղծման շեմին։ Եղջերվի և ցուլի պաշտամունքի համաղորությունը, որ Պժևորսկին նկատել է Անատոլիայում, կարելի է տեսնել նաև այստեղ՝ ցուլերի բազմաթիվ կավե փոքրիկ արձանիկները, ցլանման հենակները ու զոհարանները (մ. թ. ա. III հազ.), Լճաշենի բրոնզե ցուլերը, Առաջաձորի, Զանգեզուրի և Լոռի բերդի ցուլերի գլուխները (մ. թ. ա. II հազ. II կես), ժայռապատկերների ցուլերը և այլն։

Մ. թ. ա. II հազարամյակի կեսերին, եթե խեթական պետության մեջ արդեն ձևավորված էր պաշտամունքի կանոնավոր համակարգ և աստվածները, ստանալով մարդակերպ կերպարանք, ներկայանում էին իրենց կցորդ կենդանիների ուղեկցությամբ, ապա հայկական ցեղերի մոտ այդ երևույթը, ավելի պարզունակ ձևերով, դիտվում է ժայռապատկերների վրա սկսած մ. թ. ա. IV—III հազարամյակներից։ Իսկ ծավալային քանդակարվեստում այն արտահայտվում է սկսած մ. թ. ա. II հազարամյակի III քառորդից, որտեղ մարդակերպ աստվածությունները հանդես են գալիս իրենց խորհրդանշող կենդանիների կամ սիմվոլիկ նշանների ուղեկցությամբ։

Ուշագրավ է, որ էգ եղջերուն, իբրև քանդակ, մինչև այժմ երբեք չէր պատկերվել։ Այն առաջին անգամ ներկայանում է Լոռի բերդի արձանախմբում, ձագերով հանդերձ[26]։ Հայաստանի ուշ բրոնզեդարյան արվեստի հուշարձաններում, բացի որսի և ընտելացման տեսարաններից, եղջերուն ներկայանում է նաև իբրև մայրության ու պտղաբերության սիմվոլ։ Այս տեսակետից հատկանշական է Ենոքավանի[27] բրոնզե դոտու տեսարանը՝ խոցված արուի և ստնտու, անխոցելի մոր ու ձագուկի պատկերմամբ։ Նման տեսարան է ներկայացնում նաև Լոռի բերդի քանդակը. կենտրոնում կանգնած արուին հետապնդում են երկու կատվաշներ, իսկ նրա երկու կողմերում կանգնած մայրերը խաղաղ սնուցում են իրենց ձագերին։

Եղջերվի թեման, կապված պտղաբերության ու մայրության գաղափարի հետ, պահպանվել է հայկական ավանդությունների ու հեքիաթների մեջ։ Անտառներով հարուստ Լոռվա շրջանի լեգենդանման մի հեքիաթում պատմվում

---

[25] S. Przeworski. Le culte du cerf en Anatolie.--Syria. T. XXI, Paris, 1940, pp. 66—75.

[26] Փոքրասիական եղջերուների արձանիկները բոլորն էլ արու են, ինչպես բարձրաքանդակներինը, որոնց վրա կանգնած են նույնպես արական աստվածներ։ Միայն հյուսիսային Սիրիայում, նոր խեթական շրջանի մի բարձրաքանդակի վրա (մ. թ. ա. I հազ. սկիզբ), իգական աստվածությունը կանգնած է եղջերվի վրա (Պրժևորսկի, նշվ. աշխ.)։ Ի դեպ, թե՛ մեր և թե՛ խեթական արվեստում պատկերված են միայն «կովկասյան ագնիվ եղջերուներ»։

[27] С. А. Есаян. Погребение № 14 астхиблурского могильника.—«Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 1, էջ 223։ Նույնի՝ Древняя культура племен Северо-восточной Армении. Ереван, 1976, с. 244—245։ Հ. Ռ. Խորայելյան. Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում. Երևան, 1973, էջ 159—161։

է աղքատ այրի կնոջ մասին, որը ծննդաբերում է անտառում, մենակ է և կաթ չունի երեխային կերակրելու։ Երեխայի լացին մայրը պատասխանում է.

Նանա, նանա օրորոց,
Պախրեն կգա ծիծ կտա,
Ջիգար չունենա՝ քիչ կտա,
Քամին կգա ժաժ կտա,
Մանդրատերևը փափկոց կլի,
Լենատերևը ծածկոց կլի։

Մայրը մեռնում է, պախրան գալիս կերակրում է և այլն։ Այդ կողմերն իր շքախմբով որսի ելած թագավորն անզգուշաբար սպանում է պախրային, ապա միայն տեսնում, որ «պախրայի ծիծն էդ էրեխի բերնումը, էրեխի մերն էլ կողքին ֆոգին տված ա, կուռներուն թիլանում է, մնում են հուշ էլած։ Ասում են.— Պախրեն մարդկերանցից ջիգարով ա»[28]։

Վրացական բանահյուսության մեջ նույնպես եղջերուն հանդես է գալիս որսորդական առասպելներում ու ավանդություններում, որպես պտղաբերության, մայրության, որսորդության խորհրդանիշ, սուրբ ու հզոր կենդանի, անտառի տիրուհի։ Մի ավանդության մեջ, ձագ ունեցող մայր եղջերվին սպանող որսորդը հոր կողմից անիծվում է և պատժվում՝ զրկվելով սերունդ ունենալուց։ Նարտյան էպոսում որսորդի և անտառի աստվածուհու երեխան եղջերվի կերպարանք ուներ, իսկ շատ որսորդներ սուրբ կենդանուն սպանելու պատճառով կյանքով էին հատուցում[29]։

Ըստ Մ. Խիդաշելու, վրացական գիտական գրականության մեջ առաջ է քաշված այն տեսակետը, թե եղջերուն, քարայծը, ձին, շունը, օձը, ձուկը և թռչունը վրացական վաղ հավատալիքների մեջ մեկ խումբ են կազմում։ Սրանք կապվում են Մեծ մայր բնության պատկերների հետ և զարգացման որոշ աստիճանում դառնում են այդ աստվածության կցորդներ։ Հատկապես սերտ են կապերը իգական աստվածության՝ եղջերվի և քարայծի միջև, որոնք հետագայում ստանում են մարդակերպ իգական պատկերներ։ Վերոհիշյալները փաստարկվում են Վրաստանից հայտնաբերված բրոնզե գոտիների ու ճարմանդների բազմազան պատկերներով[30], որոնք թեև Հայաստանի արձաններից ուշ են թվագրվում (մ. թ. ա. I հազ. սկիզբ), սակայն ցույց են տալիս, որ դրանք ավանդաբար են փոխանցվել ավելի վաղ ժամանակներից։

Անդրկովկասյան բրոնզե գոտիների վրա, որոնք զարդարված են տարբեր կենդանիների, թռչունների, սողունների, մարդկանց, երկնային լուսատուների ու երկրաչափական ձևերի զանազան կոմպոզիցիաներով, հաճախ նկատվում է եղջերվի զուգորդումը օձի հետ, երբ վերջինս հետապնդում կամ խայթում է նրան։ Հարկ է նշել, որ գոտիների վրա օձը, բացի եղջերվից, խայթում է նաև ցուլերին, ձիերին, այծերին ու այծեղջյուրներին[31]։ Այս հանգամանքը պետք է դիտել իբրև ամպրոպ-կայծակի[32] հետ եղջերվի ունեցած կապի արտահայտություն, որի դրսևորումներից մեկն էլ օձն էր։ Ջավախքի շրջանի ավանդություն-

---

28 «Հայ ժողովրդական հեքիաթներ». հ. 8, Դուզարք (Լոռի), էջ 398։

29 Е. Б. Вирселадзе. Грузинский охотничий миф и поэзия. М., 1976, с. 33, 38, 76, 98—99, 118.

30 M. Sh. Khidasheli. Mythological Motifs on the Bronze Articles of Caucasus and Luristan.—„Acta Antiqua", Budapest, 1974, pp. 353—361.

31 Տե՛ս Ռ. Վիրխով. Կովկասի տեղը քաղաքակրթության պատմության մեջ. «Ազգագրական հանդես». գիրք Ա, Շուշի, 1895, էջ 83—88, նկ. 2, էջ 88—92, նկ. 3, էջ 103—106, նկ. 18, տախտ. 4։ Б. В. Техов. Центральный Кавказ в XVI—X вв. до н. э. М., 1977, рис. 99—100 և այլն։

32 Հ. Ռ. Իսրայելյան. Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, էջ 104—114։

ներից մեկում լճերի վրա գոյացած թաթառները կոչվում են «ուշապ», այսինքն մի սարսափելի վիշապ, որ շղթաներով կապված է երկնքից։ Սա գոյանում է եղնիկից։ Ծնելուց հետո մայր եղնիկը հեռանում է, «ուշապները» իջնում են և փոքրիկին վեր քաշում երկինք, որտեղ նա մեծանալով դառնում է վիշապ։ Եթե «ուշապները» չեն իջնում, ապա մայրը գալիս և պահում է ձագին»[33]։ Եղջերվի և երկնային տարերքի կապն է արտահայտում նաև ժողովրդական հետևյալ պատկերացումը. «արևով անձրև գալիս, եղնիկները կը ծնին»[34]։

Արտահայտելով ամպրոպ-կայծակը և կրելով իր մեջ տարերքի հատկանիշները, օձը (կամ օձավիշապը) ի սկզբանե օժտված է եղել բարի կամ չար հատկանիշներով։ Եթե մի դեպքում ամպրոպն ու կայծակը կարող էին կենարար անձրև պարգևել, մի այլ դեպքում կարող էին կյանքի ոչնչացման, փոթորկի ու ջրհեղեղի առիթ դառնալ։ Այս տեսակետից բնորոշ է Շիրակավանի բրոնզե գոտու վրայի ֆանտաստիկ կենդանին, որը եղջերվի և օձի միաձուլումը լինելով՝ հավանաբար մարմնավորում է իր մեջ տարերքի աստվածության դրական ու բացասական հատկանիշները[35]։ Հինարևելյան առասպելաբանության մեջ օձը դառնում է «կյանքի ոչնչացման, կատաստրոֆի ու ջրհեղեղի սիմվոլ։ ...Օձը, օձավիշապը ամենուրեք հանդես է գալիս իբրև աղետի սիմվոլ և իբրև արևի աստվածությանը հակադրվող սկզբունք»[36]։

Հարկ է այստեղ հիշատակել Բելբի կողմից Կալաքենդում գտնված գոտին, որի վրա վազող եղջերուների շարք է պատկերված։ Սրանցից մեկի վերևում անվանձև արևն է[32]։ Նման սիմվոլ ունի Լագոդեխիից հայտնաբերված, գավակին սվաստիկա ունեցող եղջերվի արձանիկը, որի պատվանդանի ծայրերին էլ թռչուններ կան, հատկանիշներ, որոնց շնորհիվ ուսումնասիրողը կապում է նրան երկնքի ու արևի հետ[38]։

Եղջերվի և օձի համատեղ պատկերումը կարող էր դիտվել նաև իբրև չար ու բարի ուժերի հակադրություն։ Հետաքրքիր է, որ «Նոր Հայկազեան բառարանում» եղն և եղջերու բառերի դիմաց, ի թիվս այլ բացատրությունների, նշվում է նաև «սատակիչ օձից», «եղն օձի սատակիչ է» և «Այծեամն տեսանող և եղջերու օձահալած» հատկանիշները։ Սրանք Գրիգոր Նարեկացու մեկնություններն են Աստվածաշնչի «Երգ երգոցից», որտեղ բարու և չարի հակամարտությունը՝ եղջերվի և օձի պայքարը, քրիստոնեական գունավորում է ստացել։ Նարեկացին եղջերուն համարում է բարու, իսկ օձը՝ չարի արտահայտություն, ասելով, որ ինչպես եղջերուն սպանում է օձին, այդպես էլ տերը սպանում է «աներևույթ օձին» (սատանային)։ «Երգ երգոցում» խոսվում է նաև այծյամներով կամ եղնիկներով երգվելու, ինչպես նաև սիրելիին նրանց նմանեցնելու մասին[39], որն այդ կենդանիների սրբացման, գեղեցկության ու մաքրության արտահայտություն է՝ պահպանված հինարևելյան հավատալիքներից։ Ուսումնասիրողները, հենվելով Ա. Շիրակացու «Մատենագրության» տվյալների վրա[40], եղջերուն կապում են նաև այծեղջյուրի, խոնավության ու լուսնի հետ։

---

33 «Ազգագրական հանդես». գիրք Ա, Ջավախք, Շուշի, 1895, էջ 351։

34 Նույն տեղում։

35 Ռ. Մ. Թորոսյան, Օ. Ս. Խնկիկյան, Լ. Ա. Պետրոսյան. Շիրակավանի դամբարանները. «Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 2, էջ 276, նկ. 2։

36 Հ. Ա. Մարտիրոսյան. Գիտությունն սկսվում է նախնադարում, էջ 57։

37 Ռ. Վիրխով. նշվ. աշխ., էջ 74—83, նկ. 1։

38 С. А. Есаян, А. О. Мнацаканян. Находки новых бронзовых статуэток в Армении.—СА, 1970, № 2, с. 116. С. А. Есаян, Скульптура древней Армении. Ереван, 1980, с. 25.

39 «Երգ երգոց». գլ. Բ, Գ։

40 Ա. Շիրակացի. Մատենագրություն. Երևան, 1979, էջ 118։ Բ. Ն. Առաքելյան. Հայկական պատկերաքանդակները IV—VII դարերում. Երևան, 1949, էջ 90։ Հ. Ա. Մար-

Եղջերվի պաշտամունքը, ինչպես տեսանք, փոքրասիական ժողովուրդների մենաշնորհը չէր, այն տարածված էր ողջ Հայկական լեռնաշխարհում և Անդրկովկասում, սկսած վաղագույն ժամանակներից։ Սակայն ի տարբերություն Փոքր Ասիայի, Արևելյան Հայաստանի տարածքում եղջերուների արձանիկները հանդես են գալիս առայժմ մ. թ. ա. XIV դարից։

Չնայած ժամանակագրական զգալի տարբերությանը, կապը Ալաջահույուքի և Հայաստանի արձանիկների միջև, իրենց բովանդակության, կոմպոզիցիայի և իմաստաբանական տեսակետից, ակնառու է։ Ինչո՞վ բացատրել այդ, եթե ոչ մշակութային սերտ փոխազդեցությամբ, կամ որոշ էթնիկ խմբերի տեղաշարժերով։ Կարևոր է նաև հայերի ու խեթերի միևնույն հնդեվրոպական նախահայրենիքից սերված լինելը[41]։ Եթե հաշվի առնենք թեկուզ միայն այն հանգամանքը, որ խեթական պետությունն արևելքում անմիջապես սահմանակից էր հայկական առաջին պետական միավորմանը՝ Հայասա-Ազզի ցեղային միությանը, որի հետ մշակութային, լեզվական և էթնիկ սերտ առնչություններ ուներ, հասկանալի կդառնա այն նմանությունները, որոնք դիտվում են խեթական աշխարհի, հարավային Անդրկովկասի և ընդհանրապես Հայկական լեռնաշխարհի միջև։ Խեթերը, գաբնանը նվիրված տոնակատարությունների ժամանակ, արևի աստվածության տաճարում, թագավորի մասնակցությամբ եղջերուների շուրջը ծիսական պարեր և զոհաբերություններ էին կատարում։ Եղջերվի կապը արևի աստվածության հետ համարվում է փոքրասիական հին (խթական) ավանդույթի արտահայտություն և ենթադրվում է, որ եղջերուները պահվում էին պաշտամունքային նպատակների համար[42]։

Գր. Ղափանցյանն ապացուցում է, որ խեթերն ու հայասացիները երկրպագում էին միմյանց աստվածների և ցույց է տալիս փոքրասիական աստվածների գրված կարևոր տեղը հայկական պանթեոնում։ Խեթական աշխարհի ազդեցության ուժեղացումը Հայասա-Ազզիի տնտեսական, լեզվական, մշակութային, ինչպես նաև քաղաքական ու պաշտամունքային-կրոնական հարաբերությունների վրա Ղափանցյանը տեսնում է հատկապես մ. թ. ա. II հազարամյակի կեսերից մինչև մ. թ. ա. XII դարն ընկած ժամանակահատվածում[43]։ Սա այն ժամանակաշրջանն է, երբ Հայաստանի տարածքում լայնորեն տարածվում են բրոնզե արձանիկները՝ եղջերուների, թռչունների, ցուլերի, այծերի, առյուծների, խեթական մարտակառքերի ձևով, երբ շարունակվում են առաջնորդների, քրմերի ու ցեղային ավագանու ներկայացուցիչների թաղումները խեթական թագավորների ձևով, երբ բրոնզե իրերի բոլորովին նոր նմուշներ են հայտնվում, որոնք վաղուց տարածված էին առաջավորասիական երկրներում և, վերջապես, նոր տիպի պաշտամունքային խեցեղեն է մուտք գործում ու զարգանում է եռագույն խեցեղենի մշակույթը։

Դեռևս 1950—60-ական թթ. Լճաշենի դամբարանաթմբերի հարուստ նյութերը հնարավորություն ընձեռեցին Անդրկովկասի բրոնզի զարգացման ուշ փուլում նկատել տեղական տարրի որոշակի առանձնացումը՝ սիրո-խեթական մշակույթի ակնառու ազդեցությամբ[44]։ Մ. թ. ա. II հազարամյակի I կեսին Անդրկովկասի նյութական մշակույթի մեջ փոքրասիական ձևերի ներթափանցման, ինչպես նաև ուղղակի էգեյան ու փոքրասիական իրերի

---

տիրոսյան. Ժայռապատկերների դասակարգման մի քանի նախնական տվյալներ. ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1970, № 9, էջ 67։

41 Т. В. Гамкрелидзе, Вяч. В. Иванов. Древняя Передняя Азия и индоевропейские миграции.—«Народы Азии и Африки», 1980, № 1, с. 64—69.

42 В. Г. Ардзинба. Ритуалы и мифы древней Анатолии. М., 1982, с. 16—17.

43 Гр. Капанцян. Хайаса—колыбель армян. Ереван, 1948, с. 25, 80, 84, 98, 115, 125—126.

44 И. М. Дьяконов. Урартские письма и долументы. М.—Л., 1963, вступительная статья Б. Б. Пиотровского, с. 10—11; А. А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа, с. 111—113.

մուտք գործելու մասին արժեքավոր դիտողություններ և ուսումնասիրություններ են կատարվել տարբեր հեղինակների կողմից[45]։ Փոխազդեցությունները պահպանվում և շարունակվում են նաև հետագա դարերում, մինչև ուրարտական պետության բարձրացումը, երբ ուժեղանում են հարաբերությունները Հարավի հետ։

Հետագայում եղջերվի պաշտամունքը հավանաբար փոխում է իր նախկին իմաստն ու բովանդակությունը և նոր արտահայտչաձևերով հանդես է գալիս ուրարտական[46] և հետագա ժամանակների հայկական արվեստում՝ դարձյալ պաշտամունքային իրերի հետ առնչված[47]։ Եղջերվի թեման հարազատ էր նաև հայկական վաղ քրիստոնեական արվեստին, որն արտահայտվում է պատկերաքանդակների մեջ[48]։

Այսպիսով, եղջերվի տարբեր կերպավորումները բրոնզեդարյան Հայաստանում, արձանիկների հանդես գալը, բանահյուսական ու ոսկրաբանական նյութերի տվյալները, սրանց համադրումը հարևան երկրների մշակույթների հետ ցույց են տալիս, որ եղջերվի պաշտամունքի փաստերը Հայկական լեռնաշխարհում առայժմ դիտվում են մ. թ. ա. III հազարամյակից սկսած։ Եղջերուների առաջին բրոնզե արձանիկներն Անդրկովկասում հանդես են գալիս ուշ բրոնզի վաղ շրջանից՝ կապված բրոնզի արտադրության բուռն վերելքի և քանդակարվեստի զարգացման հետ։ Արձանիկների ստեղծումը կապվում է նաև սոցիալ-տնտեսական փոփոխությունների, ցեղային ավագանու ուժեղացման, նյութական արժեքների կուտակման, հասարակության դիֆերենցիացիայի և պետական մտածողության սաղմնավորման հետ։ Արևելյան Հայաստանի արձանների նմանությունները մ. թ. ա. XXIV—XVIII դդ. փոքրասիական նմուշներին կարելի է բացատրել խեթական պետության քաղաքական և մշակութային ուժեղ ազդեցությամբ, որտեղ առկա է նաև սոցիալական ու հոգևոր միևնույն մակարդակի վրա գտնվող ցեղերի միանման մտածելակերպը։ Խեթական ազդեցությունը դեպի հյուսիս և արևելք կարող էին տարածել Հայասա-Ազզիի հայկական ցեղերը և իրենք խեթերը, որոնք հայերի հետ մեկ աշխարհագրական միջավայրում են զարգացել և ունեն հընդհանրապես նույն նախահայրենիքը։ Բացառված չէ, որ ժամանակ առ ժամանակ նրանք առանձին խմբերով գաղթեին դեպի արևելք։ Եղջերուն, կապված լինելով տարերքի բարի ուժերի հետ, համարվել է մայրության, պտղաբերության, բերրիության, որսորդության, գեղեցկության խորհրդանիշ։ Հայկական լեռնաշխարհի բնիկների հոգևոր մշակույթի զարգացման տարբեր փուլերում այն կարող էր ունենալ տարբեր խորհրդանիշներ ու բովանդակություն։ Եղջերվի արձանիկները Հայաստանի ուշ բրոնզի վաղ շրջանում ոչ միայն զարդարել են սայլերն ու մարտակառքերը, այլև ամրացվելով երկար ձողերի ծայրին, գործածվել են իբրև «դրոշ» և պաշտվել իբրև կուռք։

---

45 Б. А. Куфтин. Археологические раскопки в Триалети. Тбилиси, 1941, с. 89—90, 93—94; Б. Б. Пиотровский. Археология Закавказья. Л., 1949, с. 47; А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы, с. 70—71; Г. Е. Арешян. Малоазийские формы в керамике Армении среднего бронзового века.—СА, 1973, № 4, с. 40—49.

46 Մ. Իսրայելյան. Ուրարտական մի հուշարձան Երզնկայի մոտ. «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, էջ 314, նկ. 3։

47 Ի. Կարապետյան. Արմավիրի խեցեգործության մի նոր տարատեսակ. ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1973, № 11, էջ 70—71, նկ. 2, 3։ Բ. Ն. Առաքելյան. Արտաշատ մայրաքաղաքի պեղումները. «Գիտություն և տեխնիկա», 1981, № 9, էջ 12, նկ. 6

48 Բ. Ն. Առաքելյան. Հայկական պատկերաքանդակները IV—VII դարերում. Երևան, 1949, էջ 90, նկ. 63։

## СЛЕДЫ КУЛЬТА ОЛЕНЯ В ДРЕВНЕЙ АРМЕНИИ

*С. Г. ДЕВЕДЖЯН*

(Резюме)

В 1975 г. в одном из богатых грунтовых погребений (№ 15) Лори-берда была найдена уникальная бронзовая скульптурная группа. Она состоит из полых фигурок трех взрослых оленей (самец и две самки), двух сосунков и двух гепардов, преследующих оленя-самца (рис. 1—3). Внутри фигурок находятся шарики-погремушки. Композиция по стилю соответствует начальной стадии искусства эпохи поздней бронзы Армении и, несомненно, является изделием местных мастеров. С ранних времен олень занимал важное место в жизни древнего населения Армении. В наскальных композициях Сюникских и Гегамских гор IV—I тыс. до н. э. имеются многочисленные изображения оленей (напр. рис. 6). Объемные статуэтки оленей в Армении известны с XIV—XIII вв. до н. э. (Лчашен, Лори-берд) по первые века I тыс. до н. э. (Вагуди, Ангехакот, Лцен и др.) Недавно была найдена статуэтка оленя в Октемберянском районе (рис. 4); она датируется концом II—началом I тыс. до н. э. Скульптурная композиция из Лори-берда несколько напоминает хеттские и протохеттские скульптуры-штандарты из Аладжа-Гююка (XXV—XVIII вв. до н. э.), которые также обнаружены в «княжеских», богатых погребениях. В странах Передней Азии штандарты были широко распространены как культовые предметы или символы городов, что нашло отражение и в Библии. Вопреки мнению некоторых ученых (Франкфорт, Пжеворский) о том, что культ оленя—чисто анатолийское явление, находки в Армении доказывают, что этот культ не только был распространен на Армянском нагорье, но и имел здесь глубокие корни. Сохранившиеся до наших дней фольклорные и этнографические материалы подтверждают, что олень символизирует материнство, плодородие, красоту, кротость, святость и охоту.

Несмотря на значительную хронологическую разницу, связь между статуэтками Малой Азии и Армянского нагорья по содержанию, композиции и семантике очевидна, что объясняется культурными связями и передвижением этнических групп. Большую роль здесь сыграл, в частности, племенной союз Хайаса-Аззи, на который, по Г. Капанцяну, имели большое политическое, культурное, религиозное влияние хетты с середины II тыс. вплоть до XII в. до н. э. Появление статуэток связано также с социально-экономическими изменениями, общественной дифференциацией, ростом производства бронзы и развитием скульптурного искусства. Они не только украшали колесницы и повозки племенной знати, но и использовались как штандарты и почитались как идолы.